

ՀԱՆԴԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԿԵՆԱՑ ԵՒ ՄԱՀՈՒ ԽԵԴԻՐ

ՅԱՏԵՆԻ ՕՐԻՆԱՑ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

(Տես Հտ. ԽԲ. էջ 341):

Ա. Մահուան պատիժն արդար է և վաւեր:

1. Ճշմարիտ է թէ բնութեան և կենաց արարիչ և տէր՝ Աստուած է, և թէ առանց աստուածային կամաց թոյլ տուութեան ուրիշին կենքը վերցընեն՝ ոչ արդարութիւն է և ոչ իրաւունք: Սակայն անժխտելի ճշմարտութիւն մի է և այս՝ թէ վերնախնամ տեսչութեան թոյլտուութեամբ՝ երկրաւոր տեսչութիւնը և երկրորդական պատճառը, այսինքն մարդիկ ևս՝ ինչպէս ուրիշ մարդկային անհատներու գոյութիւն տալու կարողութիւնն ունին, այսպէս ալ զանոնք ՚ի կենաց բառնալու, երբ հասարակաց բարին զայն պահանջէ:

2. Մարդկութիւնն ՚ի բնէ ընկերական ստեղծուած է. և այս ընկերական վիճակը նախ ընտանիքով սկսաւ. ընտանեկան ընկերութիւնն՝ քաղաքականի վերածեցաւ, քաղաքականն՝ ազգի, և ազգն՝ առանձին վարչութեան կամ գերազանց իշխանութեան: Եթէ բանաճ զպատմութիւնն, եթէ քննենք մարդկութեան սիրտը՝ անդ կը գտնենք իշխանի ոճրագործութիւնները պատժելու օրինաւոր իրաւանց անյեղի սկզբունքներն և օրէնքը: Ոչ ոք ՚ի մարդկանէ, հասարակաց բարոյն համար՝ զոհած է ՚ի սկզբան իւր յատուկ ազատութեան մի մասը: « Այս ցնորքը՝ վիպասանութեան մէջ միայն կարելի է գտնել », կ'ըսէ Պէքքարիա: Եթէ կարելի լինէր, մեզմէ իւրաքանչիւրն պիտի կամենար թէ այն օրէնքներն և օրինա-

ւոր պարտքերն, որք զայլս իրարու հետ կը կապեն՝ զինքը ազատ թողուին. և ամենայն ոք կը ջանայ ինքն ըլլալ կեդրոն բոլոր երկրագնացոյս վրայ հանդիպած իշխանութեանց և պատահարաց: Սակայն աստի՛ մարդկային ազգի բազմամտութիւնն, խնամութիւնը, և անտի՛ այլ և այլ յարաբերութիւնը, ընդաբոյս կուրք, տկարներուն առ զօրաւորս ունեցած պէտքերն, և ամենէն աւելի անձնական շահուց մղումն, միացոյց նախնի նահապետական ընտանիքներն ՚ի միասին, որոնք մէկ նախահաւէ մի առաջ կու գային: Այսպէս ուրեմն անկէ ետքն եկող մարդկային անհատներն, որոնք տարբեր նախահաւէ յառաջ եկան և տարբեր խանձարուրքի մէջ սկսան բազմանալ, հարկ էր որ միանային նախընթաց միութեանց դէմ դնելու համար: Այսպէս ուրեմն ընկերական կենքն և պատերազմն յառանձին անհատից և յընտանեաց՝ ազգութեան փոխուեցաւ:

Այսպէս ուրեմն օրէնքներն ևս այն ազգային միութեանց հետեանք են, և այնպիսի պայմաններ՝ որոնցմով իրարմէ ազատ և անջատեալ մարդիկ՝ միացան ՚ի մի ընկերութիւն. որոնք նախ պատերազմներէն, ապա իրենց առանձին ազատութիւնը վայելելէն ձանձրացած՝ զոր անօգուտ իսկ համարեցան, մինչև վերջը պահել չկարենալու անստուգութեան պատճառաւ, իրենց ընդարդս ազատութեան մի մասը զոհեցին, մնացածը ապահով կերպով և

խաղաղութեամբ վայելելու համար: Եւ առանձին անհատից կամ ընտանեաց՝ հասարակաց բարոյն համար զոչած կամ պահեստի դրած ազատութեան կոտորակաց ամբողջութիւնն է ուրեմն ազգի մը գերիշխանութիւնը կազմողն, և անոր աւանդապահ և գործադրողն՝ է նոյն ինքն օրինաւոր իշխանն և կամ զլուսն:

Սակայն այս աւանդը կազմեն բաւական չէր, այլ իրենց վախճանին հասնելու և առանձնակիանաց անիրաւ յափշտակութեանն զայն պաշտպանելու համար, որոնք ոչ միայն իրենց ազատութեան հոն դրած մտած՝ այլ ուրիշինն ևս կ'ուզեն ձեռք բերել, պէտք էր զգալի շարժիչներ հաստատել, և առոնք են պատիժներն: Ուրեմն ինչպէս կը տեսնէք՝ հարկն է որ ստիպեց զմարդիկ օրէնքներ և պատիժներ դնել, և անոնց միաբան հաւանութիւնը, որ կը կազմէ պատժելու իրաւունքը: Այսպէս կը թելադրէ մեզի ողջամիտ բանն. « Ըսենք հոգեւունչ մարդկանց ձայնն ևս: »

3. Առաքեալն հեթանոսաց՝ առ Հռովմայեցիս դրած թղթոյն Ը գլխոյն մէջ կը ծանուցանէ յայտնապէս թէ որ և իցէ օրինաւոր իշխանութեան ծագումնն յԱստուծոյ է. « Բանդի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և որ ենն՝ յԱստուծոյ կարգեալ են »: Ուրեմն եթէ ամէն օրինաւոր իշխանութիւնը յաստուածային գերիշխանութենէն կը ստանան իրենց հաստատութիւնն 'ի ձայն ժողովրդեան, այսպէս նաև ամէն դրական օրէնք և պատիժ մարդկային իշխանութեան՝ աստուածական և բնական օրինաց ցուցմունք են: Իմաստունն քան զամենայն մարդիկ՝ ամէն տարակոյս կը լուծէ ըսելով. « Ինն թագաւորք թագաւորեն և հզօրք գրեն գաղղարաբիրն (Առկ. Գլ. Բ. 15), այսինքն է զօրէնս: Ուրեմն եթէ արդար են իշխանութիւնք և օրէնք, արդարացի պէտք է ըլլայ նոյնպէս անոնց սահմանած մահուան պատիժն: Շատ վտանգաւոր է հակառակորդաց ոմանց լանքն, որք այն պա-

տիժը վերցընելու դիտմամբ՝ օրինաւոր իշխանութեան պատիժ հաստատելու իրաւունքն ևս ժխտելին, յորս նշանաւոր է Լուքաս:

4. Հինաւուրցն քան զամենայն օրէնսդիրս՝ Աստուած ինքնին՝ տառնաբանեայ և բնական օրինոք ոչ միայն արգիլեց զմարդասպանութիւնն՝ ըսելով « Մի սպանաներ », այլ նոյն իսկ կամաւոր սպանչին արժանաւոր պատիժն անգամ իւր մեծ վկայութեամբ որոտաց. « Որ ատիցէ զեղբայր իւր և դարան գործիցէ նմա . . . հարկանիցէ զանձն նորա և մեռցի, և ինքն փախէ, ցէ 'ի մի քաղաքացն . . . առցնն զնա և մեռցի » (Երկ. Օրին. ԺԹ):

5. Եթէ մահուան պատիժն անիրաւ ըլլար և ոչ բնաւ կարելի, այս ինչ կամ այն ինչ դարն, այս ինչ կամ այն ինչ ազգն՝ անոր դէմ բողբոսած կ'ըլլար և կամ ջնջած. սակայն մենք կը տեսնենք մարդկութեան առաջին հասակէն մինչև ցայսօր՝ ամենայն ազգք իբր կարևոր միջոց գործադրած են զայն: Չկայ արդարև օրէնսդիր մը, չկայ իմաստասէր մը, որ անոր օրինաւոր գործադրութեան դէմ դարձած ըլլայ:

6. Քրիստոնէութիւնն անգամ, որ անցեալ դարուց անիրաւութեանց դէմ բողբոսեց, որ ամենայն կերպ բարբարոսութիւն գատապարտելով՝ կործանեց, և եղբայրսիրութեան հիմունքն հաստատեց, ոչ երբեք դադրեցուց մահուան պատիժը: Չէ մարթ գանել եկեղեցական Ս. Հայր մը, չկայ օրինաց դատաւոր մը՝ որ անոր օրինաւոր գործադրութեան դէմ ձայնը բարձրացուցած լինի, թէպէտ և բազմաթիւ են անոր յափազանցութեանց դէմ բողբոսողներն, այլ գոգչես աւելի ընդարձակած, Գեղեցիկ է առ այս իրպարտայ մեծ իմաստասիրին առածն, որ իւր Յաղագս քաղաքին Աստուծոյ բողբոսեց մէջ յանցանաց և պատժոց վրայ խօսելով՝ կ'ըսէ՝ թէ դրական օրէնքն առաջ կը սպառնար մարդկան թէ մի մեղանչէր՝ ապա թէ ոչ կը մեռնիր. իսկ այժմ կը պատուիրէ, մեռի՛ր՝ որպէս զի

չմեղանէք: Եւ արծուին մարդկային
խմացութեան՝ թովմաս Աղուինացի, որ
իւր սրառես մտաց աչօք մարդկեղէն
գիտութեանց բոլոր սարերն և ձորերը
քալ հետազօտեց, այս խնդիրս ալ բար-
ձրագոյն տեսակետով մը կը նկատէ,
բաւելով՝ թէ որ և է մարդու կեանքն
յիկեքեան նկատեալ՝ բարի է, և մահն
չար. բայց նկատմամբ յարակից հան-
գամանոց և տիեզերական կարգին՝
չատ անգամ հակառակն է. ուստի
առաջին տեսակետով դատաւորն կ'ու-
զէ և պարտի ուզել անխտոր ամենուն
ապրիլը, իսկ երկրորդի՝ ոճրագործաց
մահը. և ասոր օրինակ կը բերէ զդա-
տաւորն ամենեցուն Աստուած, որ իւր
նախընթաց տեսութեամբ և կամօք ա-
մենուն փրկութիւնը կ'ուզէ, իսկ հե-
տեորդաւն՝ ոմանց դատապարտիլը, ոչ
եթէ չար ինչ կամելով, այլ որպէս զի
փոքրագոյն չարեօք նոցա, չարքե-
լուին մեծամեծ բարիք, և յաւերժանան
տիեզերաց մէջ հանրական կարգ և
արդարութիւն:

Բ. Մահուան պատիժն հարկաւոր է:

1. Այս հարկաւորութիւնս պէտք չէ
շփոթել բնազանցական և մաթեմա-
թիկական բացարձակ հարկաւորու-
թեան հետ, որով կ'ըսենք՝ Աստուած
'ի յաւիտենից և և չի կրնալ չլքալ. բո-
լորն՝ մեծ է քան զմասն իւր, շրջանակն՝
քառակուսի չէ, և այլն:

2. Խոտլական իրաւագիտաց հօրը՝
Ֆիլանճէրիի հետ (Յաղագս գիտու-
թեան Օրէնսդրութեան. ի. Բ. Գ. Գլ.) կը
հարցընենք. Այն սպաննելու իրաւուն-
քըն, զոր ստացաւ որ իւր կինաց դա-
ւաճախին կենացը վրայ մեռնելէն յա-
ռաջ իւր կեանքը պահելու համար, ար-
դեօք մեռնելէն վերջը կը վերնայ այն,
եթէ յայլս կը փոխանցի. Գեռ աւելի
ճիշդ. պէտք է ենթադրել թէ ոճրագոր-
ծըն, որ իւր եղեռնագործութիւնը կա-
տարելէն առաջ՝ ապրելու իրաւունքը
կորսնցուց, (վասն զի սպանուողն նոյն
ատեն իրաւունք ունէր զինքն սպա-
նել, և օրէնք՝ մարդասպանութեան մահ
սահմանած են) կատարելէն վերջը դար-

ձեալ պիտի ստանայ այն իրաւունքը:

Ռոմանեօզի՝ այդ կը պատասխանէ,
Սիակայն մենք մահուան պատժոյն հա-
կառակորդին անգամ Պէքարիայի սկըզ-
բունքով կ'ըսենք՝ ոչ, իրաւքընէ, ինչպէս
նախնաբար ապացուցինք թէ առան-
ձին մարդկանց հասարակաց բարոյն
համար մէկդի դրած ազատութեան
կոտորակաց ամբողջութիւնն է՝ որ կը
կազմէ ազգի մը իշխանութիւնն և պա-
տիժները, ուրեմն այն անձին մեռնե-
լէն ետև՝ այն իշխանութիւնն և իրա-
ւունքներն՝ կ'անցնին իրօք անոնց՝ որոնց
ընկերութեան մասն կը կազմէր նա:

3. Եթէ իրօք կը տէն այնպիսի իրա-
ւունք մը նաև յետ մահուան, պէտք է
վերադարձընել նախ անոնց՝ որոնց որ
սերտիւ կը վերաբերէր մեռնող անձը,
Առաջին դարերուն մէջ և առաջնաբոր՝
սպաննելոյն մերձաւորն կը գործա-
դրէր այդ իրաւունքը, նախ նահապե-
տական վարչութեան և ապա արիւ-
նակցութեանը պատճառաւ: Դժնդրոց
զրոյ Գլ. 1. Ը. 24, և Գլ. 1. Ա. 32, Յուդա
իւր հարսերէն մին մահուան կը դա-
տապարտէ. Ռուբէն դաշտմբ իրաւունք
կու տայ Յակովբայ՝ իւր որդւոց կեանքը
վերցընելու, թէ գինեխամին յետս չը-
դարձընէ. այսպէս նաև Յակովբ լաբա-
նու իշխանութիւն կու տայ: Երկրորդ
թաղ. Ժ. Թ. գլխոյն մէջ կը հրամայէ
Աստուած զմարդասպանը մատնել «ի
ձեռն մերձաւորի արեանն, և մեռցի ու
Աթենացիք և Հոռոմայեցիք՝ որոնք ի-
րենց լաւ և իմաստուն օրինքը հին և
նոր աշխարհի մէջ նշանաւոր են, նոյն-
պէս կը վարուէին. այսինքն՝ ամբաստա-
նողն կամ սպանուողին ազգականն կ'ու-
րոյէր յաճախ սպանողին պատիժը:
Խոսկրատ և ինքնին Եպֆինէս (Ըն-
դէմ Գիմնոթենի) կ'աւանդեն թէ Մե-
լիտոս եղաւ Ալլիբիադեայ որդւոյն ո-
խերմին մահ որոշույն. և Խոսկրատ
կը թելադրէ դատաւորաց՝ դեռ խստա-
գոյն պատիժ մը տալ անոր, ուսկից ռ-
բէնք ազատ կը թողնին: Հոսկիւ ուրեմն
Միլիտարգեսին մահուան դատապար-
տութիւնն՝ իւր դատախազին որոշմամբ

ըստ ամենայնի 'ի գործ գորուեցաւ :

4. Եթէ օրինաւոր իշխանութեան կը պատկանի պատիժներ դնել, և նա մահուան պատիժը սահմանած է այնմ՝ որ հասարակաց կամ առանձնականաց բարին բռնաբարէ, ուստի բռնաբարութիւնն կատարուելէն յետոյ՝ և նովին իսկ գործով՝ զոր արգելուն օրէնք՝ ընդ պատժով՝ կ'իյնայ չարագործն. ուստի և անոր համեմատական փնասով ալ պէտք է վրէժը լուծանել, և առ ընդհանուր ընկերութիւնն, առ ընտանիս սպանուողին, սպանելոյն կենաց և նախատուած օրինացը փնասին արդար հատուցումն ընել: Ապա թէ ոչ՝ բարոյական և ընկերական կարգերն, քաղաքացեաց ազատութիւնն և արդարութիւնն խանգարած կը լինին: Իրաւցրէն, զուք ըսէք, ինչպէս կարէ այնուհետև հասարակութիւնն ապօրոգի ըլլալ իւր ընդից և կենաց վրոյ, եթէ տեսնէ կամ լսէ թէ տակաւին իւր ծոցը կ'ապրին բռնաւոր օձեր և արիւնաբու վազրեր: Ինչպէս կրնան անոր ընտանիքն և ամենայն արք առաքելիք՝ սրտի գոհութիւն ունենալ, եթէ չտեսնեն թէ չարագործութիւնն և իրենց սիրելիքն արեւելի կ'ապտիտ պիտի զրտնեն, երբ զանոնք տակաւին կենդանի տեսնեն, պարծոյ իրենց ըրածին վրայ, և զուցէ ոխերիմ և ծարաւի միացելոց արեանն ևս: Կործնէ թէ այն անմեղուն, որ Աբելի պէս զոհ եղաւ ոճրագործին մղեգնութեան՝ մեռնելէն յետոյ պիտի դադրի երբեք արգարութիւն և իրաւունք բողջեղէն. միով բանիւ, արդարութիւնն և իրաւունք ինչպէս կրնան չարագործութեան վրայ յաղթական հանդիսանալ և եղբարնց յառաջն առնուլ, եթէ ոչ, ըստ տէրունեան առածին, ջշարսն՝ չարաւ կորուսանելով և բառնալով 'ի միջոյ:

5. Պէքբարիա իսկ կը խոստովանի (Յաղագս օճր. և պատժոց. ԺՁ. էջ 49) թէ մահուան պատիժն հարկաւոր է դարձեալ, երբ ընդհանուր ազգն կամ իւր ազատութիւնն և գոյութիւնը կոր-

սընցընելու վտանգի մէջ է, և կամ առանձին անհատի մը մահուամբն՝ իւր ազատութիւնն ու գոյութիւնը ձեռք պիտի բերէ:

Արդարեւ, որ համեստ քաղաքացին, որ հայրենասէր հոգին, որ մարդասէր սիրտն կարեկցելով հանդերձ՝ մահուան պիտի չդատապարտեն այն սեացեալ, ուրացող և չարակամ հոգիները, որոնք զբարին մտաց և սրտի կորսնցընելով՝ ոճիրներով միայն կ'ուզեն մարդկային ընկերութիւնը ծածկել, այսինքն, Պաւսանիաս մը՝ որ զՅունաստան մէկ աղջկան մը համար կ'ուզէ Պարսից մասնել. Կատիլիկոս մը՝ որ կը շանայ բոլոր յաւերժական քաղաքն 'ի հուր և 'ի սուր ծախել, և առաքելի քաղաքակցաց աճիւնին վրայ՝ իւր վառասիրութեան կուռքը կանգնել: Մերութան մը և Վասակ մը, որք բոլոր Հայաստանի տղետից և կործանման կրկին և կըրկին կը գարաւնին: Դարձեալ եթէ փորենտիա՝ Պետրոս Միքայի և Գաղգիա՝ Յովհաննա Տ'Արքի կենաց հետ՝ զիւցաղնական մահն ևս յերկինս բարձրացուցին, որոնք լոկ իրենց կամաւոր յօժարով թեամբ և անձնական իշխանութենէն վարեալ՝ իրենք զիրենք զհանցին հայրենեաց համար, ուրեմն որչափ առաւել ևս ազգային օրինաւոր իշխանութիւնն՝ կարող է առնել այն բանը, մահաւանդ ուր չարագործաց կեանքը զոհելով՝ փոխանակ անցեալ չարին՝ ապագայ մեծ բարիք մը կարող է հայթայթել ազգին:

6. Արգ եթէ հայրենեաց վերահաս կործանման կամ փրկութեան համար, եթէ իշխանին կենաց դարանողին համար, եթէ քաղաքական յեղափոխութեան, պաշարման վիճակի, զինուորական յանցանալ, և ուրիշ պարագայից մէջ արդար և կարեւոր կը համարուի մահուան պատիժն, ինչո՞ւ պիտի չըլլայ նաև որ և է քաղաքացույ կեանքը վերացնողին համար: Յիրաւի, այն ոճիրն ներկայապէս և ըստ ինքեան նկատելով՝ առանձին անհատի մը կամ ընտանեաց կը փնասէ. ստիպյն իբրև ապա-

գայ) և անստոյգ գործ մտածելով նոյն պէս ընդհանուր ազգի մը և մանաւանդ բոլոր մարդկային ընկերութեան կը սպառնայ: Ո՛վ կրնայ սպառնով ըլլալ թէ ուրիշին պիտի հանդիպի այն անդարմանելի չարքին և ոչ երբեք իրեն: Ո՛չ որ: Ուրեմն այս ահաւոր անստուգութիւնն իսկ առաջիններուն պէս ամենուն կը սպառնայ. ամենայն որ ահաւորի մէջ կրնայ վարանիլ, միով բանիւ, ամենայն քաղաքացիք այսպիսի տեսութեամբ՝ ոճրագործաց մէկ մէկ զոհեր պատրաստուած կը համարուին: Ուրեմն այս անստոյգ վարանմանէն և զոհողութեանէն ազատելու համար ընդհանուր ընկերութիւնը, պէտք է այն պէս վարուիլ չարագործաց հետ՝ ինչպէս որ վարուիլ կը սահմանեն օրէնք՝ վերոյիշեալ պարագայից մէջ:

7. Ո՛վ որ ուշի ուշով քննած է մարդկութեան սիրտը և անոր չարածուկը դիտած՝ պէտք է համոզուի թէ ինչպէս զբարեգործութիւնս՝ այսպէս ալ չարագործութիւններն ենթադրեալ երջանկութեան մը կամ վայելից յուսով կ'ընեն մարդիկ, և այս է բարին պատահմամբ և կամ իսկապէս որ և իցէ գործոց առաջին շարքին: Արդ եթէ չարագործք ապագայ բարւոյ մը յուսով ձեռնամուխ կ'ըլլան յոճիւս, ուրեմն պէտք է այնպիսի պատիժ մը զնեւ ամոր դիմաց, որ անմիջապէս և ուղղակի այն կարծեցեալ բարիքէն կամ վայելքէն զրկուամն սպառնայ. ուստի այս անմիջական և սպառնական միջոցն՝ է մահաւան պատիժն. որովհետեւ երկրաւոր երջանկութիւններ վայելողն՝ կեանքն է, և զանիկայ վերջընելով՝ անհետացած կը լինին նաև ամենայն վայելք և ակնկալութիւնք:

8. Մարդկային և աստուածադիր օրէնք՝ միաբան կը հրամայեն բառնալ զչարս ի միջոյ և բառնալ արմատաքի: Այսպէս ըրին և կ'ընեն ամենայն հասարակութիւնք, այսպէս կ'ընէ վիրաբուժըն, այսպէս կ'ընեն տխմար պտղաւաճառն և երկրագործն՝ իրենց բնական փորձով: Սակայն կը հարցընենք մեր

պատուական վերձանողաց, արդեօք ոճրագործը մշտնջենաւոր բանտի, կամ աշխատութեան և կամ աքսորի դատաարտելով՝ զչարս ի միջոյ բարձած կ'ըլլան արմատաքի. ոչ բնաւ: Եթէ ոճրագործներն անբնակ երկիրներ հեռացընելու ըլլան տէրութիւնք, և եթէ անեւ կարծուած բանտերու մէջ, դարձեալ ոչ աշխարհէ անջատած կ'ըլլան և ոչ ալ յընկերութենէ. այլ վերաբերութիւն ինչ կրնան ունենալ և ունին միշտ մարդկութեան հետ, որոյ կենաց և բարւոյն դարանեցան. և նոյն իսկ զանոնք նայողներն մարդիկ են: Այն երկիրներն՝ որոնք այսօր այս բանիս յարմար են, օր պիտի գայ որ բազմամարդանալով՝ անոր չժառայեն. ինչպէս եղան Սիկիլիա, Իռլանտա, Սիպերիոյ մի մասն և ուրիշ տեղեր: Եթէ այնպէս ալ համարելու ըլլանք, դարձեալ կարծէք թէ այն չարագործաց ապագայ դարմն և սերունդն, այն սոգքին չահաւոր պիտի ըլլայ՝ որուն մէջ այս կերպով և օր քան զօր կը բազմանայ: Մի յուսացք. ահաւասիկ Սիկիլիա, այս չարագործաց վայրն՝ ինչպէս էր հին Հռովմայեցւոց ժամանակ, գոգցես նոյն է և այսօր, թէպէտ և իտալիա փոյթ ըրած է քաղաքալրութեւս այն ժողովուրդը: Արդարեւ, ձիոյն բերանը սանձ գնելով՝ կարող ենք նուաճել և ի բարին գործածել զայն դարուց ի դարս. առիժին ժանիքն և ճիրանները հանելով ընդհանրապէս և ամօքել. սակայն ոչ այսպէս ապականեալ տարերս մարդկութեան՝ ուր և հեռացընենք, ինչպիսի անեւ զընդաններու մէջ ալ փակենք և խիստ աշխատութեանց ենթարկենք. թէպէտ և անոր ձեռքերը կաշկանդենք, թէպէտ և սուքերը, բայց ոչ բնաւ միտքը և մտաց սեւեռմունքները, որ յայտնի եղերաւ, կան յանցաւորութեան խիստ բաղդին տակ ճնշուած կը կարծուի, սակայն իմացականութեան կայծակներն դեռ կը ցայտեն անոր աչքերէն, և սրտին խորը անթեւեւալ կը պահէ ազատութեան հուրը. առթի մը կը սպասէ անդէն և անդ բորբոքելու և իւր գերու.

Թեան շղթաները խզելու։ Այնուհետև թող վախճան քաղաքակրթիք ընկերութիւնը, վասն զի ոչ մի շանթածիփ կայծակ, ոչ մի փոթորակայից մրիկ՝ կտրող չէ անոր վիսանները պատմիլ։ փորձով տեսնուած օրինակներ խիստ շատ են։ Եղիպտացիք իրենց Մէրէմիս թագաւորին ժամանակ (1500), զոր Ս. Գիրք խստասիրտ կը կոչեն, բոլոր երկրին չարագործները Աւարիս քաղաքը աքսորեցին, որոնք հոն աճեալով՝ Հիւքսուս ներու աշխատանք ժամանակ իրենք ալ 80,000 հոգի՝ մեծ յեղափոխութիւն մը յարուցին։ Իսնոթ են ամենուն ափրիկեցի գերեաց պաշտամութիւնն և կատիլինեանց ահաւոր ճակատամարտըն ընդդէմ Հուփմայ, յետ ոքսորելոյն կատիլինայ։ Ոչ միայն կրկերոնի, այլ բոլոր ծերակուտին անխոհեմութիւնն՝ ահաւոր օրինակ մը կարող էր ըլլալ ու ճարագործութեան պաշտպաններուն, եւ թէ կատիլինա այն բաղդախնդիր ճակատին մէջ յաջողած ըլլար։ Ի՞նչ կրքացան ընել խաչ և աւետարան և կրկին երգումով և ներողամտութիւն չայոց՝ Սինեանք իշխանին սև սրտին, որ վերջապէս Տղմուտ գետն և Արտազու գաղտը իւր համազգայնոց անմեղ աւրեամբը ներկեց։ Ի՞նչ բանի եկաւ Ամերիկոյ անապատներուն մէջ երկայն տարիներ Ռօջֆօրի և ուրիշ յեղափոխականաց թափառելն, երբ Գաղղիա դառնալէն վերջը՝ երկիրը տարածայնութեամբ լեցուցին, և ինչեք ընելու պատրաստ չէին՝ եթէ զտէրութիւնն անգործ և իրենց կուսակիցներ ևս գտած ըլլային։ Միով բանի ինչպիսի չարագոյն ոճրագործութեանց վերատին ձեռք չեն մխեր այն ոչ սակաւ եղեռնաւորքն Սիպերիայէն փախչելէն յետոյ. այս բանիս կը վկայեն նաև Ռուսիոյ տէրութեան դատապարտելոց ցուցակներն անգամ՝ եթէ հարցնենք։

9. Ըստ նաբոլէոնեան օրինաց մատենի՝ 75 տարին անցած անձինք՝ մշտնջենաւոր աշխատութեան պատժոյն անբաւական կը համարուին։ Կան դարձեալ ուրիշ բնական և մտաւորական

Պրաւ Ա.

հիւանդութիւնք՝ որ չեն ներեր մարդկային տնտեսներն այս ծանր պատժոյս ենթարկել։ Սակայն որչափ ալ այդ տարիներուն տակը ծանրացած համարենք զմարդիկ, որչափ և աշխատութեանց անկարող, սակայն կարող են մեծամեծ ոճիրներ գործելու, զորս թեքեա երիտասարդներուն հասակն և անփորձութիւնն չի ներեր գործել։ Ուրեմն եթէ մահաւան պատիժն ևս վերցընելու ըլլանք՝ այն ժամանակ ոճրագործութիւն իբրեւ առաքինութիւն՝ անպատիժ պիտի մնայ, և այն հասակն՝ որ առաքինութիւն գործելու հասակ պիտի ըլլար, արձակ համարձակ կրնայ խափայ և ոճիրներու մէջ գահավիժել զմարդիկ։

10. Մահուան պատժոյ հարկաւոր ըլլալուն վերջին և զօրաւոր փաստ մի ևս կու տան այսօր Եւրոպիոյ թէ այն աղգներն՝ որք բնաւ չվերցուցին զայն, և թէ անոնք՝ որք վերցընելէն յետոյ՝ դարձեալ վերահաստատեցին. ինչպէս Աւստրիա և Չեխիցերի. վերջինն որ ազատասիրութեան և քաղաքակրթութեան հայրենիք համարուած է, յետ երկար փորձառութեան դարձեալ այսօրուան օրս կարեւոր կը համարի՝ ի կիրարկանել զայն, և այնու օր քան զօր ընկերութեան սպառնացող բազմապատիկ ոճրագործութեանց հեղեղին դէմ դնել։

Գ. Մահուան պատիժն աւելի օգտուներ ոչնիք քան թէ վնասներ։

1. Աւելի ճարտասանական զուրցուածք մը կ'երևի այն դժուարութիւնըն՝ քան ծանրութիւնունցող, թէ մահուան պատիժն ոչ է ի խրատ և ոչ ալ աղէկ աղգեցութիւն ընող. որովհետև կամ ի ծածուկ կը լինի և կամ փոխանակ երկիւղի խրախոյս կ'աղգէ տեսողաց վրոյ և յաճախ անգամ տեսելութիւն։ Նոյն և առաջ՝ չատ տեղ և չատ անգամ հրապարակական կը լինի. իսկ ծածուկ կերպով կատարուածներն իսկ յետոյ օրագրաց ձեռքով ամէն աշխարհք կը հրատարակուին, թէ նիւթական և թէ բարդական ճանաչողու-

թեան և պատասխանատուութեան նը-
կատմամբ երկու զգայարանքներն ևս
հաւասար կը նպաստեն . երկրորդ, լսե-
լեաց ազդեցութիւնն այնչափ աւելի
կրնայ ըլլալ մարդուս վրայ, երբ ճար-
տար գրչաւ և երանգօք ևս նկարուած
ըլլայ այն ահաւոր տեսարանն :

2. Դատապարտելոյն կենաց և մա-
հուան կոխն՝ որչափ և կարճատե և ըլլայ,
որչափ ալ ուխաննայիւ ընդունած ,
դարձեալ միշտ ամէն պատժէ աւելի
ահագին է և սոսկալի . և այս սոսկումն
ոչ թէ տանջանաց և ցաւոց սաստկու-
թիւնն է, ոչ, այլ կենաց և գոյութեան
ոչնչանալը : փորձով միշտ տեսնուած
է, և բանն ինքնին կը վկայէ թէ ամէն
արարածք իրենց բնական վիճակի մէջ
նկատելով՝ որչափ ալ թշուառութիւն
նեւ և ցաւեր ունենան՝ դարձեալ կե-
նաց կը փափաքին, և իրենց գոյութիւնը
ոչնչացընող առարկայէն կը խորշին և
կը մերժին : Եթէ երբեմն երբեմն գրո-
նուեցան ոճրագործք՝ որոնք զխապար-
տութեան գացած ժամանակնին՝ կնցցէ
մահ գոյեցին, կամ յուսահատութեան
ձայն համարելու է այն և կամ ցնորա-
կան մոլեգնութեան :

3. Երրորդ, եթէ ըլլայ բարեկիրթ
քաղաքացւոց համար և եթէ չարաբա-
րոյին՝ որ արդէն իւր մտացը մէջ պա-
տրաստած է ոճրագործութեան ծրա-
դիրն և իւր որսին դարանը լարած՝ վար-
չութեան կը պատկանի այն եղբրան
ահաւորութիւնն և մեծութիւնը ցուցը-
նելով՝ զնա ետ կեցընել 'ի գործադրու-
թենէ : Իսկ որովհետեւ ուրիշ ոչ մի բա-
նով կարող չէ այնպէս ազդու ընել այն
եղբրան մեծութիւնը՝ բայց եթէ զգա-
լի և ճիշդ օրինակաւ բանալ այն ահա-
ւոր գործոյն տեսարանն անոր դիմա-
դատի ինչպէս ամենայն յանցաւորի,
այսպէս ալ եղբրան ծրագիրը ձգող
անձանց աչքերն եթէ իրենց ոճիրը կա-
տարելէն ետքը պիտի բացուէին, այ-
սու՝ կանուխ բացուած կը լինին, և ի-
րենց նախընթացից ահաւոր կատարա-
ծովն՝ յետոս կը կենան անտի և կ'ըզ-
դաստանան :

4. Մահուան պատիժն այնպիսի ծանր
և լուրջ կերպով կը կատարուի, որ մէկ
կողմանէ դատաւորաց կարեկցութիւնը
կը յայտնէ՝ իբրեւ սոսկական քաղաքա-
ցեաց, իսկ միւս կողմանէ իբրեւ օրինաց
և պերմարդկային անձնաւորութիւննե-
րու՝ երկիւզ և պատկառանք : Արդարեւ
որ քարասիրտ մարդն, որ ապստամբ
ոգին այն ժամանակ պիտի չզգացուի
և չլինուի դատաւորաց համեստ քա-
ղաքացիութեան վրայ, երբ տեսնէ՝ որ
աչքերնէն ցաւոց և կարեկցութեան
յորդահոսան վտակներ իլուցած ժա-
մանակ՝ արդարութեան անտեղիտալի
արքանեակներ կը հանդիսանան և ըն-
կերութեան և առանձին անհատից խը-
նամակալներ, առ 'ի բառեալ զարն
արմատալքի : Պատմութիւնն իսկ կ'երաչ-
խաւորէ՝ թէ հասարակութիւնն ոչ եր-
բեք գրգռուած է կամ դէմ ելած դա-
տաւորաց և իշխանին՝ օրինաւոր դա-
տապարտութեան մը համար . այլ ընդ-
հակառակն միշտ չարագործաց դէմ
գրգռուած է, և ուզած է անդէն և անդ
զանոնք պատառ պատառ ընել : Անտու-
նիոսի կենդանի ճարտասանութենէն
աւելի՝ կեսարու անկենդան դիակն կը
յուզէ բոլոր Հռովմ, որոնք կեսարու
բարեբարութեան յիշատակաւ կրկին
կենդանացած՝ մահ կը կանչեն ընդդէմ
Բրուտոսի և Կասիոսի առաքինեաց ան-
գամ : Հներիկոսի քաղցր յիշատակաւ՝
Դաղդիացիք վագր կը դառնան ընդ-
դէմ Թալպալքի : Այսպէս նաեւ ամե-
նայն առաքինի քաղաքացեաց մահն՝
մեծ ազդեցութիւն ունեցած է մինչև
ցայսօր հասարակութեան վրայ : Իրաւ-
ցընէ, ինչ կը նշանակէ այն համաշխարհ
հի ցաւակցութիւնն՝ զոր կը յայտնեն
մէկմէկու իշխանք և մեծամեծք աղ-
գաց և օրագիրք, և փոխադարձ ցա-
սումն ոճրագործին վրայ ցայսօր : Մա-
նաւանդ թէ ամսով յառաջ Ամբրիկոյ
կինկեննա քաղաքին մէջ պատահած
քաղաքային մեծ յեղափոխութիւնն տե-
րութեան և դատաւորաց դէմ՝ զոճրա-
գործաւ ոմանս չպատժելուն պատճա-
ռաւ՝ այս բանիս մեծ ապուշոյց է :

5. Կը խոստովանինք արդարեւ, թէ դահիճներն մեծապէս անգթութեան կը վարժին այս պատճառաւ. բայց մի կրնայ բացասել թէ այս չարիքն՝ շատ աւելի նուազ է բաղդատմամբ այն չարեաց, որոնք տեղի պիտի ունենան, եթէ փոխանակ մահուան՝ մշտնջենաւոր բանտի, աշխատութեան և ոքսորի պատիժն հաստատելու ըլլանք։ Ստուգիւ, եթէ այժմ իւրաքանչիւր գլխապարտութեան ատենին՝ դահիճ մը միայն պէտք է, այն ժամանակ ընդհակառակըն հարիւրաւոր և հազարաւոր բանտապահներ, նեղիշներ, վերակեցուններ և ուրիշ դասակարգի մարդիկ պէտք պիտի ըլլայ կարգել, որոնց թիւն ևս քան զևս պիտի աճի՝ ոճրագործաց թիւոյն աճմանն համեմատ։ Որք եթէ դահիճն չարագործին վերջին տխուր հառայանքները միայն լսելով և եղբրական մահը տեսնելով՝ այնչափ կը յոռիանայ, ապա ինչ պիտի չըլլան բռնոր այն վերոյիշեալ անձինքն, որոնք դիշոր և ցորեկ այն չարագործաց հետ կենակից և կենցաղակից ըլլալով՝ անդադար անոնց կատաղի հայհոյանքները պիտի լսեն՝ ընդդէմ օրինաւոր իշխանութեան, ընդդէմ ընկերութեան և օրինաց, ընդդէմ արդարութեան և կրօնից, և անոնց կազերովը բորբոքին։ Այս կարծեմ թէ պարզ ենթադրութիւն չէ. ամենօրեայ փորձն կը ցույցանէ թէ անոնցմէ շատերն հուսկ ՚ի վախճանի կամ ոճրագործութեամբ և կամ ապստամբութեամբ կը լնցընեն իրենց կեանքը։ Հիմայ լսէք, փոխանակ ոճրագործներն ուղղելու՝ անոնց թիւը բազմացընել չէ այս։

6. Ընկերութեան ծոցն եղած մարդասպաններուն մասին կրնար ըսուիլ թէ աքսորելով կամ մշտնջենաւոր բանտերու և հանքերու մէջ դատապարտելով՝ անոնց փնտաւոյն և չարեաց հատուցումն ըրած կը լինի. արդ այժմ կը հարցընենք, թէ այն չարագործներն որ յընկերութենէն հեռի և այս երեք պարագայից մէջ վերստին ոճրագործութեան մէջ ինկան կամ պիտի չյ-

նան՝ ինչ պատիժ տալու է, ուր հեռացընելու։ Դարձեալ հարկ կ'ըլլայ մահուան պատժոյն դիմել. վտան դի անով նախ ցրցուց չարագործն թէ նախընթաց պատիժն իրեն համար բաւական ասնձ չէր. երկրորդ՝ մի և նոյն յանցանքն կրկնուելով՝ անոր պայմանն ևս կամ տեսակն ծանրացաւ, անոր համար ուրիշ ծանր պատիժ մը պէտք է անոր ոճիրը վերցընելու համար՝ զոր առաջինը չկարողացաւ. ուրեմն այս պատիժն է դարձեալ մահուան պատիժն։

Դ. Մահուան պատիժն քան զայլս համեմատուիս և։

1. Ամենայն ոճրագործ կամ մարդասպան մի և նոյն կերպով չեն մեռնիր. այլ իւրաքանչիւրին վիճակին, հասակին, վարքին, յանցանաց և պատճառին համեմատ կերպեր որոշած են օրէնք։

2. Ճիշդ խօսելով համեմատութիւնն ոչ սաստիկ կամ նուազ ցաւ զգալուն մէջն է, ոչ երկարատե կամ անակնունելի տանջանաց և ոչ իսկ անարգական կամ պատուաւոր դատապարտութեան. որովհետեւ մարդկանց կազմաւածքին, խառնուածոյ և բնաւորութեան պէս՝ ասոնք ևս փոփոխական և անհամեմատ բաներ են, թոյլն և երկշոտն, ինչպէս նաև դուհիկէ՝ տանջանքէն և ցուադին մահուանէն աւելի կը սոսկան՝ քան արքայէն, աշխատանքէն, և այլն, և անարգական մահուանէն, իսկ տոհմիկը, հայրենասէրը և փառասէրը՝ վերոյիշեալ անարգ պատիժներէն դուրս գէ աւելի սոսկան։ Սակայն մէկ բան մը՝ որուն կորուստն իրօք ամենուն համար նոյն է, թէպէտ և ոմանք աւելի ըզգան և ոմանք նուազ, է նոյն ինքն մահուան պատիժն, և մահն միայն ամենուն աղետից և երջանկութեան վիռնքեան չափը կարող է կազմել. որովհետեւ ամենուն ևս հասարակ է, և զամէնքը յաշխարհէս կ'անջատէ. ուրեմն մահուամբ միայն կրնայ մահը լուծուիլ։

3. Սպանուողին կրած ցաւն կրնայ հաւասարիլ դատապարտելոյն ցաւոց

և կրած տաղանդներն հետ, մանաւանդ թէ շատ անգամ՝ կը գերազանցէ իսկ Տարակոյս չկող թէ շատ աղքատ և ճարտասանօրէն նկարագրուած են դատավճռոյն խօսքերն և դատապարտութիւն տալու անհաւատ օրինակները՝ զորս կը կարգաւորէ և կը լսենք դրեթէ ամէն օր, իրենց բնական աղէտիքն և առանց ճարտար գրչի՝ ամէն նկարագրէ աւելի ազդողազոյն կը խօսին և հասարակաց սիրտը կը յուզեն և կիրքը կը շարժեն։ Նկատեցէք Աղեքսանդրները՝ որք մահաբեր թոյնի հետ ՚ի միասին՝ խուրձ մը սայրասուր սլաքներու ևս իրենց սրտին և թոքոց մէջ կը կրեն։ Նկատեցէք Յուլիոս կեսարները՝ որք բազմաթիւ դաւաճաններու գաշիւնի հարուածոց ենթարկուած՝ կենաց և մահուան հետ կը մրցին։ այնչափ երկայն և այնչափ դաւան է անոնց ցաւն, որչափ որ դահիճներն իւրեանց բարեկամներն են։ Այն դիակն՝ զոր անգամ անգամ յօշոտած կը գտնէք, միւսը այրուած, ուրիշ մը խղզուած, միթէ նուազ տաղանդներ կրեցին։ Այն բազմաթիւ գերդաստանն՝ զորս մի զկնի միոյ կարեւոր խոցուած և ընդ հողով ծածկուած կը գտնէք, այն նորապսակ փեսաներն և հարսերն՝ որոնք իրենց յոյսերով թըշնամոյն մոլեգնութեանն օրս եղան՝ կարծէք թէ իրենց արիւնը մանող ոճրագործէն նուազ ցաւ և տաղանապ կրած ըլլան՝ իրենց որդերգական օրհանքն առնելու։ ոչ, ոչ բնաւ։ Այնչափ աւելի եղաւ անոնց նեղութիւնն և տաղանապն՝ որքան յանկարծակիի եկան, և անգութ ռոտիոյն ձեռքն ինկան։ Ով որ կ'ուզէ՝ թող այնպէս կարծէ։ Ինծի համար անմեղին նուաղեալ միջիւնն՝ աւելի սրտաճմիրի է քան չարագործին յուսակտուր գոչիւնն։ շատ աւելի կը շարժիմ յարտատու՝ լսելով կեսարու աղիողորմ ձայնը, որ կը կանչէ մահաբեր հարուածոց ներքեւ։ Որդեակ իմ Քրիստոս, դու ևս զիս կը հարուածես, քան որ և է աղբւր դատապարտելոց։ Ուր թողունք որ ասոնք՝ արգարութեան

զոհ կ'ըլլան, և անիրաւ տեղ կը բողոքեն, իսկ անոնք անիրաւութեան զոհ եղան, և իրաւամբ անոնց բողոքն աւելի կը զօրէ։

Այս օրինակներն՝ զորս մէջ բերինք՝ չկարծէք թէ հազիւ հանդիպած կամ երևակայական բաներ են, ոչ։ այլ ընկերութեան ծոցը կատարուած ամենօրեայ դէպքեր։ Սակայն ասոնք դեռ ոչ ինչ են այս բազմաթիւ կենցաղոյ հեղձական ծովուն մէջ հանդիպած և հաւոր տեսարաններուն քով, զորս մարդկային բազմահար շարութիւնն և նախանձն կը մեքենայեն, և մեր սիրտը առաջ չերթար պատմելու։

Ե. Մահուան պատիժն անդարմաւնիլ է առողջիւ։

1. Մահուան պատիժը ջնջել ուզող կուսակցութեան բերած փաստերուն ամենէն զօրաւորն և անդիմադրելին այս կ'երեւի, որ հաւաստարապէս միւսներուն լեզուն և գրիչը կը կաշկանդէ։ Ձէ և չէ մարթ ուրանալ այն հարկաւար։ որ անմիջ մարդկանց իբրեւ ոճրագործ մահուան դատապարտիլը և անոնց մահը ողբալէն զողորիլ։ այս ամենատոյգ է։ Սակայն կրնանք ըսել՝ որ ասիկա օրինաց սահմանէն և դատաւորաց դիտարկութենէն դուրս պատահական դիպուած մի է։

2. Մարդկանց կարողութենէն վեր և պատասխանատուութենէն ազատ և անհրաժեշտ հարկ մ'է։ և որովհետեւ ինչպէս տիեզերաց՝ այսպէս նաեւ ընկերական և քաղաքային սովորական կարգէն դուրս բանքը են դիպուածն և հարկն, որոնց ոչ դէմ դնել և դարմանել կարելի է և ոչ իսկ հաշուի առնել։ ուրեմն հետեանք ինքնին յայտնի է։

3. Գերազոյն օրէնսդիրն անգամ աւանայն օրէնսդրաց՝ մահուան պատու, հասը երբայական ազգին սահմանած ժամանակ՝ կանխաւ տեսնելով մարդկային տկարութիւնն և անոր դատաստանի մէջ վրիպիլն՝ բնաւ։ և եթէ վրիպեսցի ՚ի քէն բան ՚ի դատաստանի և դատաստանի, ՚ի մէջ արեւան և արեւան . . . յարուցեալ ելցես ՚ի տեղին՝

զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո՝ ա-
նուանել զանուն իւր անդ: Եւ երթիցես
առ քահանայն, առ զետայիս և առ
դատաւորն, և քննեալ պատմեսցենք զ
զդատաստանն, և արաոցիս ըստ հրա-
մանին: զոր պատմեսցենք զոր՝ ի տեղ-
ւոյն իցեն, զոր ընտրեսցէ Տէր Աս-
տուած քո. և զգոշացիր յոյժ առնել
ըստ ամենայնի՝ որպէս օրինադրեսցի
քեզ, մի խոտորեսցիս ի բանէն մի յաջ
և մի յահեակ » (Երկ. Թագաւոր. ԺԼ.
8 — 11):

Աւստի, ինչպէս կը տեսնէք, այսու
արդարութեան ատենի մէջ պատա-
հած անդարմանելի հարկի մը դարմա-
նը՝ Աստուած իրեն հոգւով լեցուած
տեսանողաց և իրեն կը վերապահէ: Իսկ
որովհետեւ այժմ՝ տեսանողք չկան, և
անոնց տեղ օրէնք և դատաւորք և օ-
րինաւոր իշխանութիւնք կը վարեն ըզ-
ժողովուրդս, ուրեմն անոնց և վերնա-
խնամ տեսչութեան պէտք է թողուլ այն
դժուարակնճիւն հանգոյցի լուծումը.
որչափ որ կարելի և մանրազնին խու-
զարկութիւնք կը զօրեն և կանոնք
վճիռ կու տան, այն վճիռը առ ժամս
արդարութեան ձայն համարելու է և
անոր անպարտ զոհը՝ զոհ արդարու-
թեան: Իսկ պատասխանատուութիւնն
և անդարմանելի կենաց դարմանը՝ Նա.
խանարամութեան թողուլ է, որ եթէ ու-
զէ՝ անհաւատալի կերպով անոր անմե-
ղովթիւնը կրնայ յայտնել, ինչպէս չստ
անդամ յայտնած է, գիտենք ի պատ-
մութենէ: Իսկ եթէ չուզեր յայտնել՝
այն իսկ նշան է թէ այն կենաց կորուս-
տենէն աւելի մեծագոյն բարիք մը պատ-
րաստեր է անոր և ընկերութեան, ու-
րուն մեր միտքն չի հասնիր:

4. Ո՛վ չի տեսներ և չի լսեր այն բազ-
մաթիւ և անմեղ զոհերը, որք ստէպ
ստէպ կը հանդիպին ծովու և ցամաքի
վրայ, չոգենաւուց, չոգեկաւաց, հան-
քաց, գործատանց, բժշկաց, դեղավա-
ճառներու, պատերազմաց և ուրիշ ա-
րուեստից պատճառաւ, որոնք պիտի
չհանդիպէին՝ եթէ այս պատճառներն
չըլլային:

Սակայն ո՞ր աղբ, ո՞ր տէրութիւն
բողոքեց անոնց դէմ. ոչ ոք. մահաւանդ
թէ ամենայն աղբը և աղինք կը ջանան
նորանոր զէնքեր, հրանօթներ, քօր-
փետիւններ և այլ դժօխային զարհուրե-
լի մեքենաներ հնարել՝ մարդկութեան
կեանքը վերցրնելու համար: Ասոնց
դէմ արժան էր բարձրանալ ընդհա-
նուր ընկերութեան ձայնն, և սակայն չի
բարձրանար. ինչ պատճառաւ ար-
դեօք. որովհետեւ անոնցմէ ոմանք ան-
հրաժեշտ հարկեր են, այլը մարդկու-
թեան օրէնք, և ամէնքն առհասարակ՝
ընդհանուր ընկերութեան օգտակար
են. և անոնց գիպուածական վնասներն՝
իբրև կաթիլս անձրևի, հաստատուն և
սովորական կարգի օգուտներու ու-
կիանոսներուն մէջ կ'ընկղմին: Այսպէս
ուրեմն խօսելու և խորհելու ենք մա-
հաւան պատուհասի մասին, որոյ ինչ
պատական է ընկերութեան ընդհանուր
բարին ապահովելն, յորում է նաև ա-
ռանձնականաց բարին:

Կը յուսանք թէ այս յօդուածով
մետալին երկու երեսն ևս, այսինքն
մահուան պատուհասի դժուարակն-
ճիւն խնդիրը զննած եղանք ըստ բա-
ւականին, և տեսանք թէ երկու կու-
սակցութեան ի նկատար և հսկառաւ
կողմից փաստերն ևս զօրաւոր են: Սա-
կայն ըստ մեր առանձնական տեսու-
թեանն, եղբակացընելով՝ առաջնոյն
ենթադրութեանց նժարն աւելի ծանր
կ'երևի քան թէ իրական և ընդհանուր
դիպաց, բաց ի միոյն: Իսկ վերջնոյն՝
փորձառական օրինակաց, տրամաբա-
նական ոկղբանց, և ընդհանուր մարդ-
կային օրինաց նժարը ծանրագոյն:

Իսկ ոճրագործութեան դէմ գործա-
դրուած պատժոց գալով՝ կ'ըսենք թէ
երկուքն առաւանձնականաց վնասա-
կար են, վասն զի անոնց ազատութիւնը
կը վերցընեն. սակայն չենք տարակու-
սիր ըսել թէ երկուքն ևս ընդհանուր
ընկերութեան նպաստաւոր են, որով-
հետեւ անոր բարին կ'ապահովեն: Սա-
կայն այս երկուքն ո՞րը քննելու և ո՞րն
յոտին պահելու է, եթէ հարցընեն

վերծանողք, կը պատասխանէ՛ք յա-
նուն և յօգուտ մարդկութեան՝ թէ եր-
կուքն ևս պինդ բռնելու են վարչու-
թիւնք, իբրև երկկողմանի և երկզնի ե-
րասանակներ մարդկութեան սանձին՝
անոր ազատութիւնն և ընթացքը կա-
ռավարելու համար: Միոյն տակը նուա-
ճելով ազատ կամեցողութեան կամա-
ւոր և ընդ երկար մտածուած շարժ-
մունքները. իսկ միւսոյն տակը նուա-
ճելով այն կոյր, խստերախ և ակա-
մայ շարժմունքները՝ որոնք կամուրէն
կ'անեն իրենց նախկին մղումը: Ինչ-
պէս միակողմանի երասանակով չէ
մարթ երկվարին գնացքը լաւ ուղղել
յայս կոյս և յայն, այսպէս ուրեմն եթէ
այս սպառնական երասանակներէն մէ-
կը վերցնենք, մարդկութեան ըն-
թացքը կամ յով և կամ յահեակ
վարած կը լինի՛ք ուշ կամ շուտ, և
կամաւոր և ակամայ ոճիրներն՝ առ
հասարակ միոյն ձեռքով նուաճել ջա-
նացած: Բայց ընդունայն և ֆլասակար
ջանք, որովհետեւ ոչ համեմատութիւն
և ոչ իսկ խորի գրած կ'ըլլանք ընդ-
այստիկ և ընդ այնս: Երկրորդ, մարդ-
կային ազատութիւնն և զեղծմունք ա-
ւելի զօրանալով քան զայն՝ հուսկ 'ի
վերսնային պիտի յաջողին սանձարձակ
երկվարի պէս խզել զայն և մարդկային
ընկերութիւնը կործանման խոր ան-
գրնդոց մէջ խարդաւանել: Մէկ կողմա-
նէ այս ահաւոր անկումը չտեսնելով
ոմանց գէժ՝ յանդիման, և միւս կող-
մանէ ալ՝ յանուն սուտանուն ազա-
տութեան և եղբայրսիրութեան, և նո-
րափրութենէ մղուած՝ չեն դադրիր
գոչելէն. Անկցի կախաղան, Սակայն
ուշի ուշով մարդկութեան օրէնքն և
ընդհանուր ընթացքը գիտելով՝ համա-
նման կը գտնենք ովկիանոսի ընթաց-
քին և օրինաց, և գուցէ այնչափ աւելի
փոփոխական և անհաստատ, որչափ որ
բարոյական են անոր օրէնքներն և դիւ-
րափոփոխ: Արդարև, բաց 'ի բազմաթիւ
և հանճարեղ ենթադրութեանց՝ շատ
և շատ պատմական յիշատակարաններ
և վկայութիւնք իսկ կ'ապացուցանեն

թէ ազգք և ազինք ոչ միշտ յառաջա-
դիմած են և ոչ ալ շարունակ յետամը-
նացութեան մէջ մնացած, այլ ընդհա-
կառակն աւեաց նման բարձրանալով՝
մերթ արուեստից և քաղաքակրթու-
թեան ծայրը հասած են, և մերթ ևս
խոնարհելով յանկումն և յապականու-
թիւն գահավիժած են: Ինչպէս անոր
մտաւորական յառաջխաղացութիւնքն՝
այսպէս ևս բարոյականն և սրտի կըր-
թութիւնն՝ չենք կրնար բռել թէ միշտ
բարգաւաճած է. Բազում մասամբ և
բազմապիսի օրինակք Աթենացիք, Ե-
գիպտացիք և Հռովմայեցիք, մեր դա-
րուն հորիզոններէն իսկ թերևս աւելի
վեր բարձրացան՝ ըստ ինքեան և բնա-
կանապէս մտածելով: Սակայն քրիս-
տոնէութեան գերաբուն լոյսն՝ որ չնաշ-
խարհիկ սկզբունքներով բոլոր հինա-
ւուրց դարիւրէն վեր ամբառնալով, այս
բարձրութեանը հասցուց մարդկային
ընկերութիւնը, ով կրնայ երաշխաւո-
րել թէ բնականապէս ալ՝ նոյն բար-
ձրութենէն յայլ բարձրութիւն պիտի
վեր հանէ շարունակ, ինչպէս Միջին
դարն ըստ բազում գլխոց ստորին ե-
ղաւ քան զքրիստոնէական թուականի
առաջին դարերը, այսպէս ալ ապա-
գայք կրնան շարաբաստիկ ըլլալ մարդ-
կութեան համար քան զներկայն: Ու-
րեմն, ով իշխանք, օրէնսդիրք, դատա-
ւորք և ժողովուրդք, եթէ կը ցանկանք
այս մարդկութեան ովկիանոսը անալէ-
կոծ և խաղաղ անցնիլ, եթէ կը ցուն-
կանք 'ի պատիւ քրիստոնէութեան
և մարդկութեան՝ մեր եղբայրներէն
նուազ ոճրագործներ և թշուառական-
ներ տեսնել, եթէ կ'ուզենք ընկերու-
թիւնը դարուց 'ի դարս և յերկանկու-
թեան յաւերժացնել՝ անխզելի և պինդ
պահենք այն կրկին և մարդկային ա-
պերասանութիւնը սանձակոծող երա-
սանակները՝ զորս աստուածային օրէնք
ընդ մարդկայնոյ՝ անդուստ 'ի վերուստ
գրին մարդկութեան բերանը և սանձե-
ցին, հետագայ դարերը գործադրեցին
մինչև ցայսօր, և որուն սյուսհետեւ և
ցյաւիտեսնս ժամանակաց պէտք պի-

տի ունենայ մարդկութիւնն: Արդ եթէ անոր մանկութեանը ժամանակ դրուելով այն երասանակներն՝ հազիւ կրցան սանձել անոր ահի պարանոցը, այժմ այրական հասակին մէջ ինչպէս աւելորդ է բանաւոր կը համարին ոմանք՝ զայնս վերցընել. այս բանս չեմ հասկընար: Ո՛վ տեսարք և փաստաբանք, մի թէ ամենայն ազգը առհասարակ քաղաքակրթութեցան, միթէ՞ ՚ի բարին եւեթ յառաջագիմեցին և կամ անոնց ամենուն բնաւորութիւնքն միօրինակ են: Ոչ բնաւ: Հողազնտոյս հինգրին մի մասն եւեթ քաղաքակրթութեմ է, անոնց քաղաքակրթութեան ամենամեծ զարգացման հետ ՚ի միասին՝ սուտանուն ազատութիւնն և չարիք ևս մեծապէս զարգացած ք են. ուրեմն պէտք չէ առանց սանձի թողուլ, ուրեմն զօրաւոր սանձի պէտք կայ. ով որ կ'ուզէ ոճրագործին սանձը վերցընել և անոր բազուկը զինել, ուղղակի մարդկութեան սիրտը կը վիրաւորէ և անոր ոտքին առջն գլորման վիհը կը բանայ:

Արդարեւ ամենայն զգայուն և քաղաքակիրթ մարդոյ անկ է ցանկալ և ըստ կարեւորին հայթայթել բոլոր իւր

նմանեաց և առանձին անհատից բարորութիւնն և կեանքն ապահովել, առանց խտրութեան՝ իրն ըստ ինքեան միայն նկատելով. սակայն գամ մի նկատի առեալ զայն բոլոր իւր մանրամասն հանգամանքներով՝ պէտք է այլ ազգ խորհել, և ըսել թէ արդարեւ մարդկային ընկերութեան բարին, տիեզերական կարգին անաղարտ պահպանութիւնն և օրինաց և արդարութեան հատուցումն քան զնոսին վերադասելի է, երբ առաջնոց (այսինքն է ոճրագործաց) կեանքն՝ վերջնոյն համար մահ է և եղծումն, պէտք է մասնը՝ բոլորին համար և փոքրագոյնը՝ մեծագունին համար զոհել՝ առանց անգթանանալու: Յիրաւի, որչափ երջանիկ և մեծ եղան և են այն ազգերն և պետութիւնք՝ որոց թագաւորեցին այսպիսի օրէնք և արդարութիւն, և քանի՞ թշուառ և ապիկար՝ որոնք խաբեպատիր ազատութեամբ և զաղանի ընկերութեանց թելադրութեամբ՝ վերցուցին զանոնք. պատմութիւնն վկայ է այսմ:

2. ԲԱՐՍԵՂ, ՍԱՐԳԻՍԵՆ

1. Բնակչ ըսի, վասն զի այդ կուսակցութիւնն քիչ հետեւողներ ունի, ինչպէս կը ցուցընեն Պէքարիայի հետեւեալ խօսքերն. « Իմաստասիրի մը ձայնն չառ անգոր է այնչափ բազմութեան ազազակն գիմաց, որք կոյր սովորութենէ մը կը առաջնորդին. բայց այն սակաւ իմաստունն ըլն, որք կը գտնուին երկրիս վրայ, իմ ձայնիս արձագանք պիտի տան իբեկց սրտին խորը »:

2. Գաղղիոյ արդարութեան առեկի պաշտօնէին առ թագաւորն ներկայացուցած ցուցակին նայելով՝ յամին 1826ին՝ 254488ի կը հասնէր դաստապարտելոց թիւն. իսկ ընդ հակառակն յամին 1827ին՝ 308352ի կը հասնէր, որ է ըսել մէկ տարուան մէջ 54136 չարագործութիւն աւելցած էր:

